տակեցին ի կազմութիւն վկայութեան խորանին, և որ ինչ ծախեցիք յօժարութեամբ ի վերայ վերանորոգութեան եկեղեցւոյդ, և զոր ինչ մատուցանէք 'ի կրթութիւն որդւոց ձերոց և 'ի բարեկարգութիւն պահպանութեան դպրոցաց, փոխարինեսցէ ձեզ առատութեամբ երկնաւորօք և երկրաւորօք։

Աղօթս առնեմք առ Աստուած պահել ձեզ յամենայն չարէ և լի առնել ամենայն բարութեամբ, որպէս զի կարող լիջիք գործակից լինել ամենայնի որ ինչ ի փառս Աստուծոյ, և զվարձս ձեր Տէր Աստուած հատուսցէ ըստ իւրումն մարգասիրութեան և ողորմութեան աստ և ի հանդերձելումն։ Ողջ լերուք և օրհնեալք յԱստուծոյ և յամենայն սրբոց Նորա և ի մէնջ։ Ամէն։

Գրեցաւ Հայրապետական կոնդակս օրհնութեան ի 21ն յուլիսի 1881 ամի ըստ տումարիս ՌՃԼ, ի Մայր Աթոռոջս Արարատեան ի Ս. Էջմիածին ի Վաղարշապատ։

Թ. 270

ԳԷՈՐԳ Դ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Զամախի երբեմն վաճառաշահ քաղաք էր և ճոխացած հարստութիւնով, ինչպէս Աղուանից Նսայի կաթուղիկոսը գրէ. «Զամախի քաղաքն փարթամ էր և ճոխ ամենայն բարութեամբ, զի ընդունէր յինքն զհարուստ վաճառականս ի Հնդկաց, ի Պարսից, ի Թուրաց և ի Հայոց» են։

Զամախին մետաքսէ գործարաններ եւս ունի, որ տալիս է զանազան ազնիւ ձեռագործուածներ, զոր օրինակ՝ թաշկինակ, վերմակի երես են։ Ինչպէս պատմում են տեսնողները, այս քաղաքի մէջ երեւացել են շատ հին շինուածքներ, որք գետինը փորելու ժամանակն են յայտնուել. ինչպէս մի աւերակ մէջիդի ներքեւից (Ջումայ-մէջիդ) դուրս է եկել Հայոց թէ Աղուանից եկեղեցի, ինչպէս և Օրդուպատ քաղաքումն Հայոց եկեղեցին,